Արձանագրություն N 2

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2024/6>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

08 հունվարի 2024թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ավագյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա. Առուշանյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա. Քյոսեյան

Քարտուղար՝ Ն. Պետրոսյան

1. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2024/6>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ՝ Համակարգ/ բացվել են 2024թ. հունվարի 8-ին, ժամը 12:00-ին:

2. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է 2024թ. հունվարի 9-ին, ժամը 12:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2024թ. հունվարի 10-ին, ժամը 12:00-ին:

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2024/6>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

10 հունվարի 2024թ.
Ժամը՝ 12:00

6. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2024/6>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2024թ. հունվարի 9-ին, ժամը 12:00-ին:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Տվյալները
1	Յուքոմ ՓԲԸ	ք. Երևան, Դավիթ Անհաղթ 8/4, հեռ. 095555054
2	ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ	Ք.Երևան, Արգիշտի 4/1, հեռ. 077 600791, 060 771111

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

չափաբաժնի համարը	*Գնման առարկայի անվանումը*	*Չափման միավորը*	*Քանակը*	*Գնման առարկայի գնային հայտով հաստատված գին*	*Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկները (ՀՀ դրամ)**			
					Յուքոմ ՓԲԸ		ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ	
					Գնի առաջարկը			
					առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	տեղեկատվության էլեկտրոնային փոխանցման ծառայություններ (շարժական VPN ծառայություն)	դրամ	1	15327000	12516797.5	15020157	12644520	15173424

***Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը**

9. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում Յուքոմ ՓԲԸ-ն:

10. Հանձնաժողովը որոշեց գնահատել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում առկա փաստաթղթերը, որոնց գնահատման արդյունքում արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ուղարկված հայտը Համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

11. Ներկայացված հայտերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2024/6>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել Յուքոմ ՓԲԸ-ին և մերժել ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ-ի հայտը:

12. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

13. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ---------- Ա. Ավագյան

Հանձնաժողովի անդամներ՝ ---------- Ա. Առուշանյան

---------- Ա. Քյոսեյան

Քարտուղար՝ ---------- Ն. Պետրոսյան